Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 փետրվարի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Ա. Սիմոնյանը և Գ. Մելիքսեթյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են գնահատող հանձնաժողովի 09.02.2022թ. թիվ 2 որոշմամբ պահանջված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով ընթացակարգի մասնակիցներ «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ին,
2. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ գնային առաջարկը նախահաշվային գնից բարձր լինելու հիմքով,
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակից «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Գ. Ալոյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Ա. Սիմոնյան
	_____	Գ. Մելիքսեթյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան